

«Միխթար Սեբաստացի» կրթահամալիր

**Ստեղծողի մոբիլ դպրոց**

2015-2016 ուսումնական տարի

Ավագ դպրոց

Ուսումնական պլան

Ուսումնական դասընթացներ	Ժամաքանակ					
	շաբաթական			տարեկան		
	X	XI	XII	X	XI	XII
<b>Ընդհանուր բաղկացուցիչ</b>						
Հայոց լեզու	2	2	4	72	72	136
Գրականություն	2	2	3	72	72	102
Մաթեմատիկա և ինֆորմատիկա <sup>1</sup>	2	2	3	72	72	102
Բնագիտություն և էկոլոգիա	2	2	2	72	72	68
Հայ ժողովրդի պատմություն <sup>2</sup>	2	2	2	72	72	68
Հասարակագիտություն	2	2	-			
Արվեստ	2	2	-	72	72	-
Անգլերեն <sup>3</sup>	2	2	2	144	144	68
Երկրորդ օտար լեզու <sup>3</sup>	2	2				
Ֆիզկուլտուրա և առողջ ապրելակերպ	3	3	2	108	108	68
ՆՁՊ և արտակարգ իրավիճակներ	1	1	-	36	36	-
Մասնագիտական կողմնորոշում	1	1	-	20	20	20
Ընդհանուր պարապմունք	-	-	-	40	40	35
<b>Դպրոցական բաղկացուցիչ</b>						
Սովորողի ընտրությամբ դասընթաց (ներ)	8	8	8	288	288	272
<b>Լրացուցիչ ուսուցում</b>						
Նախասիրությունների զարգացման ակումբ	4	4	4	144	144	136
Լրացուցիչ ուսուցման դասընթաց (ներ)						

**Ուսումնական պլանի պարզաբանումներ**

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելվածն է:
2. 10-12-րդ դասարան սահմանված կարգով ընդունվում է հիմնական կրթություն ունեցող համապատասխան դասարանի սովորողը, որ ընդունում է Ծրագիրը, կատարում ընդունելության պահանջները և ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ միասին, սահմանված կարգով, կնքում պայմանագիր ուսումնառության մասին:
3. Ընդհանուր բաղկացուցիչով ուսումնական պարապմունքը կազմակերպվում է 20-25 հոգիանոց խմբերով: Սովորողի ընտրությամբ դասընթացի պարապմունքը կազմակերպվում է 12-15 հոգիանոց խմբով: Սովորողի նախասիրության զարգացման ակումբը կազմակերպվում է 12-25 հոգիանոց խմբով: Կրթահամալիրի տնօրենի որոշմամբ կարող են գործել ավելի փոքրաքանակ խմբեր՝ կրթահամալիրի ոչ բյուջետային միջոցների հաշվին:
4. Ուսուցման կազմակերպման մեջ սահմանված կարգով կիրառվում են առկա, հեռավար, առցանց, տնային ուսուցման ձևեր:

<sup>1</sup> Սովորողն ընտրում է «Մաթեմատիկա և ինֆորմատիկա» շաբաթական 2 կամ 6 ժամանոց դասընթացներից մեկը:

<sup>2</sup> Սովորողն ընտրում է «Հայ ժողովրդի պատմություն» շաբաթական 2 կամ 4 ժամանոց դասընթացներից մեկը:

<sup>3</sup> Օտար լեզուներից սովորողն ընտրում է շաբաթական 2 կամ 6 ժամանոց դասընթացներից մեկը:

5. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանցում փոփոխությունները ավագ դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
6. Սովորողի ուսումնական առաջադիմությունը, գործունեության արդյունքները, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում:
7. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, ակումբի, սովորողի ընտրությամբ գործունեության, լրացուցիչ կրթության) տարեկան ուսումնական օրացույցով: Դրանցով որոշվում են պարապմունքները, ճամբարները, ուսումնական ստուգատեսները, ծեսերը և տոները:
8. Շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերը իրականացվում են սահմանված կարգով:
9. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության պարապմունքներ, մանկավարժական սեմինարներ, հայրենագիտական, ուսումնական ճամփորդություններ, իրականացվել ուսումնական-հասարակական նախագծեր:
10. Ուսումնական օրը ներառում է Ծրագրի՝ 15 րոպե տևողությամբ ընդհանուր պարապմունք՝ սահմանված կարգով և ծրագրով:
11. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներ կիրառելով: Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս անհատական նեթբուք-նոթբուքով կամ պլանշետով, տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար ինտերնետից, համակարգչից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:
12. Անձնական ուսումնական բլոգի (կայքի) սահմանված կարգով վարումը սովորողի համար պարտադիր ուսումնական աշխատանք է:
13. Սովորողը և դասավանդողը կրթահամալիրի գրադարանի, այդ թվում՝ մեդիանյութերի և միջոցների բաժանորդն են և ստեղծողը: Գրադարանը, դասավանդողների բլոգները տանը և դպրոցում, սովորողին և դասավանդողին սահմանված կարգով ապահովում են անհրաժեշտ ուսումնական տպագիր և էլեկտրոնային նյութերով, միջոցներով:
14. Կրթահամալիրի, ավագ դպրոցի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը սովորողի պարտադիր ուսումնական աշխատանք է:
15. Ուսումնական պարապմունքները սահմանված կարգով կազմակերպվում են, հիգիենիկ, այդ թվում՝ բացօթյա, միջավայրում:
16. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների և մոդուլների բաղկացուցիչն են:
17. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքով, տևական շրջան Հայաստանից բացակայած սովորողների համար սահմանված կարգով կարող է կազմակերպվել անհատական ծրագրերով ուսուցում:
18. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական տարածքի և գույքի խնամքը սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունքն է:
19. Սովորողի ընտրությամբ և լրացուցիչ կրթության դասընթացները, ակումբները կազմակերպվում են կրթահամալիրի ուսումնական կենտրոններում, լաբորատորիաներում, արվեստանոցներում, արհեստանոցներում: Սովորողը սահմանված կարգով ընտրում է առաջարկվող ցանկից՝ հայոց լեզվի քերականություն, մաթեմատիկա-ինֆորմատիկա, հայ ժողովրդի պատմություն, օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, ռուսերեն, վրացերեն, թուրքերեն), աշխարհագրություն, կենսաբանություն, ընդհանուր պատմություն,

քիմիա, ֆիզիկա, գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, գծագրություն-նախագծում, քանդակ, դերասանի վարպետություն, բեմական խոսք, համակարգչային գրաֆիկական ծրագրեր, մուլտիպլիկացիա, մոնտաժ, լուսանկարչություն, օպերատորական գործ, ռեժիսուրա և բեմական գործ, սոլֆեջիո, կերպարվեստ և դիզայն, խեցեգործություն, ոսկերչություն, կար և մոդելավորում, գործվածք-գորգ-կարպետագործություն, հասարակական սնունդ, համակարգիչների շահագործում, վարսավիրություն և դիմահարդարում, հրատարակչական գործ, պարսեզապուրակային գործ, ատաղձագործություն, երկրագործություն:

20. Սովորողը կարող է առաջարկվող ցանկից ընտրել նաև ակումբային գործունեություն՝ «Լեզվաբանի», «Ընթերցողի», «Անգլիախոսի», «Հայրենագետ-էկոլոգ-աշխարհագետի», «Գիտակնների», «Ֆիզիկոս-աստղագետի», «TV mskh», «Ռոբոտիքս», «Հոգեբանի», «Երգչախումբ», «Երաժշտական լաբորատորիա», «Անիմացիոն լաբորատորիա», «Արվեստագետների», «Լանդշաֆտային դիզայն», «Թատրոն»:
21. Սովորողը ընդհանուր բաղկացուցիչից, ընտրությամբ դասընթացներից և լրացուցիչ ուսուցումից կազմում է իր անհատական ուսումնական պլանը՝ շաբաթական 30-36 ժամ ծանրաբեռնվածությամբ:
22. 12-րդ դասարանում ընդհանուր բաղկացուցիչի դասընթացներն ուղղված են ավարտական քննությունների նախապատրաստությանը:
23. Լրացուցիչ ուսուցման դասընթացներն ուղղված են հայաստանյան, արտասահմանյան բուհի ընդունելության առարկայական նախապատրաստությանը, ներառում են այլ ուսուցում: Լրացուցիչ ուսուցման դասընթացների կազմակերպման համար սովորողի (ծնողի) հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր: Սովորողը լրացուցիչ ուսուցում կարող է ընտրել կրթահամալիրից դուրս:
24. Անգլերենի ուսուցումը կազմակերպվում է ըստ սովորողի լեզվական կարողությունների մակարդակի:
25. 12-րդ դասարանում սովորողն ընտրում է բնական գիտություններ բնագավառի՝ «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա» դասընթացներից մեկը:
26. «Ֆիզկուլտուրա և առողջ ապրելակերպ» առարկան 10-12-րդ դասարաններում սովորողի ընտրած մարզաձևն է. սովորողը մասնակցում է թիմային պարապմունքներին:
27. «ՆԶՊ և արտակարգ իրավիճակներ» առարկան կազմված է «Առաջին բուժօգնություն», «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ», «Նախագորակոչիկի իրավունքներ և պարտականություններ», «Նախագորակոչիկի ֆիզիկական պատրաստություն», «Զինվորի այլ հմտություններ», դասընթացներից, ռազմա-մարզական, դաշտային և այլ ճամբարներից, սահմանված կարգով:
28. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի ղեկավարի, դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներում և սահմանված կարգով ներկայացվող էլեկտրոնային կիսամյակային հաշվետվություններում:
29. Սովորողի կիսամյակային և տարեկան գործունեությունը գնահատվում է կրեդիտների միջոցով՝ սահմանված կարգով: Դասընթացներից սովորողի գնահատումը կատարվում է 10 կամ երկու (ստուգված-չստուգված) միավորանոց համակարգով, ըստ դասընթացի ծրագրի: Անհատական պլանով որոշված գործունեության բոլոր ձևերի գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքների թղթապանակը (այդ թվում՝ ուսումնական նախագծեր, ինքնաստուգումներ, կատարած հեռավար

առաջադրանքներ, հետազոտական-ստեղծագործական աշխատանք, ուսումնական կայքի աշխատանք, ուսումնա-հասարակական նախագծեր, ուսումնական ճամփորդություններ, հայրենագիտական արշավներ, ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, ցուցահանդեսներին, փառատոներին, համերգներին մասնակցություն): Սովորողի աշխատանքների թղթապանակը տեղադրվում է սովորողի ուսումնական բլոգում: Խրախուսվում են սովորողի ուսումնական գործունեության ինքնահսկման և ինքնաստուգման ձևերի կիրառումը, արդյունքների հրապարակայնացումը մեդիայի միջոցով:

30. 10-12-րդ դասարաններում ուսումնական կիսամյակի ավարտին անց է կացվում «Ես կարողանում եմ» ստուգատեսը:
31. Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում, համերգներում:
32. 12-րդ դասարանի վերջում սովորողը հանձնում է ավարտական (միասնական) քննություններ՝ ԿԳ նախարարության սահմանած կարգով: